



ԵՐԱԿՈՇԱՔԹԻ, 21 ՆՈՅԵՄԵՐ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 11

ՎԱՍԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԻԷՊ

Ես Տիրոջ ապաւինեցայ,  
ի՞նչպէս ինձի կ'ըսէք՝ «Թռչունի պէս լեռ փախիր»:  
Որովհետեւ, ահա ամբարիշտները իրենց աղեղը կազմեցին  
եւ իրենց նետը լարին վրայ ամրացուցին,  
խաւարին մէջ հարուածելու համար սրտով ուղիղ մարդիկը:  
Եթէ մարդկային ընկերութեան հիմերը կործանած են,  
արդարը ի՞նչ կրնայ ընել:  
Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.  
Տիրոջ աթոռը երկինքի մէջ է.  
անիկա աչքէ չի հեռացներ տառապողները,  
իր ականարկով կը կշռէ մարդիկը:  
Տէրը կը քննէ արդարն ու ամբարիշտը,  
եւ կ'ապէ բռնութիւն սիրողը:  
Անիկա ամբարիշտներուն վրայ կրակ ու ծծումբ պիտի տեղացնէ,  
եւ այրող խորշակը պիտի ըլլայ անոնց վերապահուած բաժինը,  
որովհետեւ Տէրը արդար է, կը սիրէ արդար գործերը,  
եւ ուղիղ վարքով ապրող մարդիկը  
զայն երես առ երես պիտի տեսնեն:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուտ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնայ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՍԱՂՄՈՍ 11:1-7

Այս Սաղմոսը մաս կը կազմէ այն խումբին, որ յոյս, վստահութիւն, ներքին խաղաղութիւն եւ ուրախութիւն կ'արտայայտէ: Ան կը պատկանի Դաւիթին: Հերարքքրական Սաղմոս մըն է, ուր կը ներկայացնէ Դաւիթի եւ իր բարեկամներուն միջեւ երկխօսութիւնը: Վիճակը որ կը ներկայացուի Դաւիթի փախստական վիճակն է, Սաւուղի կողմէ հալածական: Դաւիթի բարեկամները կու գան իրեն խորհուրդ փախու եւ ըսելու փախիր: Ահա այս կացութեանց մէջ Դաւիթ կը պատասխանէ ըսելով. «Ես Տիրոջ ապաւինեցայ, ինչպէս ինձի կ'ըսէք՝ թռչունի պէս լեռ փախիր»: Սարդկային փրամաքանութեամբ եւ փրամադրութեամբ Դաւիթի բարեկամները ուզեցին օգնած ըլլալ Դաւիթին, երբ ան նեղութեան, դժուարութեան կամ հալածանքի մէջ էր, բայց Դաւիթի ուզածը այդ չէ, որովհետեւ առաջին իսկ արտայայտութեամբ կ'ըսէ. «Ես Տիրոջ ապաւինած եմ», Տիրոջ ապաւինողը ինչպէս կ'ըլլայ որ փախչի:

Անոնք կը շարունակեն ըսելով. «Բայց ահա ամբարիշտները իրենց աղեղը եւ նեպը լարեր են, պիտի հարուածեն ուղիղ մարդուն սիրտը»: Եթէ այս է վիճակը, արդարը ուրիշ բան չունի ընելիք: Բայց Դաւիթ անմիջապէս անոր ալ պատասխան կու տայ ըսելով. «Տէրը իր սուրբ փառարին մէջ է, Իր աթոռը երկինքի մէջ է»: Այսինքն՝ որքան ալ ամբարիշտները, թշնամիները պատրաստ են հարուածելու արդարը, սակայն արդարը իր միտքարութիւնը եւ իր հանգիստը պիտի գտնէ երբ երթայ փառար, ահա Տէրը հոն է, եւ Անոր աչքերը չեն հեռացած փառարողէն: Մենք ալ յաճախ որոշ կացութեանց մէջ կարծէք կը մարմնակնք անել կացութեան, եւ ալ ընելիք չի մնար, բայց ընդհակառակը, Դաւիթ կը յիշեցնէ, որ այդպէս չէ պարագան, ինչ ալ ըլլան պայմանները Տէրը հոն է, հեռու տեղ չէ, հեռու տեղ ալ չէ գացած: Հոն է, կը տեսնէ, ու ոչ միայն կը տեսնէ, այլեւ կը քննէ արդարն ու ամբարիշտը, որպէսզի աւարտին իւրաքանչիւրին բաժինը տայ, որովհետեւ Ան կ'ապրէ բռնութիւն սիրողը: Եթէ ամբարիշտը արդարը կը հալածէ, միթէ Աստուած արդարօրէն պիտի չհալածէ ամբարիշտը: Աստուած արդար հարուցում է որ պիտի ընէ ամբարիշտներուն անոնց վրայ կրակ ու ծծումբ տեղացնելով, եւ անոնց բաժինը պիտի ըլլայ այրող խորշակը: Այս արտայայտութիւնը Աստուծոյ դատաստանին արտայայտութիւնն է: Յիշենք Գեթսեմանի պարտեզին դէպքը երբ Քրիստոս կ'աղօթէր ըսելով. «Եթէ կարելի է այս բաժակը հեռացնես» ահա այն նոյն բաժակն է դառնութեան, Աստուծոյ դատաստանի: Քրիստոս Ինք յանձն կ'առնէ խմելու այդ դառնութեան բաժակէն: Դաւիթ, սակայն, ամենայն վստահութեամբ կու գայ արտայայտուելու, ըսելով. «Որովհետեւ Տէրը արդար է, կը սիրէ նաեւ արդար գործերը»: Նախ ան կը դաւանի Աստուծոյ արդար ըլլալը: Աստուած նաեւ կը սիրէ արդար գործերը, այսինքն՝ Աստուած կը սիրէ այն մարդիկը, որոնք արդարութեան ետեւէ են, եւ ըստ այնմ արդարութիւն կը գործեն:

Ի վերջոյ, որպէս եզրակացութիւնը, Դաւիթ ունի ամբողջական վստահութիւնը, երբ ինք վարքով ուղիղ ապրող մարդ է, այդպիսին նաեւ Աստուծոյ երեսն է տեսնելու: Հետեւաբար, ինչէն վախնայ, նոյնիսկ եթէ երբեք իր թշնամիները իրենց նետերն ու աղեղները պատրաստած են, ինք ունի վստահութիւնը, ապահովութիւն ամենակարող Աստուծոյ, որ իր ուղիղ վարքով ապրելուն համար երես առ երես պիտի տեսնէ զԱստուած: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Երանի սրտով մաքուրներուն, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»: Ահա թէ ինչպէս նաեւ կ'իրականանայ Պօղոս Առաքեալի խօսքը երբ կ'ըսէ. «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ով իցէ մեզ հակառակ», եթէ Աստուած մեր կողքին է, ով կրնայ մեզի հակառակ ըլլալ:

Այս Սաղմոսը նաեւ մեզմէ իւրաքանչիւրին համար յիշեցում Սաղմոս է, երբ մենք ալ Դաւիթի նման նեղութեան, դժուարութեան, ցաւի ու փառապանքի, կամ հալածանքի մէջ ենք, բայց ունինք ամբողջական ու անվերապահ վստահութիւնը Աստուծոյ նկատմամբ, կրնանք նոյն պատասխան տալ, բոլոր անոնց, որոնք կու գան մեզ ուղղութիւն փախու կամ խրատ տալու կամ այնպէս ընելու: Ուստի մենք որո՞ւ ականջ պէտք է փանք, մեր բարեկամներուն, որոնք թէկուզ խորքին մէջ, որպէս մեր բարիքը կ'ուզեն, եւ կամ ականջ փախու մեր ներքին ձայնին որ ունի ամբողջական վստահութիւնը Աստուծոյ: Ահա ուրեմն լաւագոյն առիթ է քննելու մեր հաւատքը եւ տեսնելու թէ որքանով է ամբողջական կամ թերի, եւ ամբողջացնելու: